



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

-- հուլիսի 2018 թվականի №---Ա
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-Ի №319Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հունիսի 19-ին «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №319Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0610 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0605 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը 1 տարով երկարաձգելու հայտով,

բ) «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման գործարար ծրագրի համաձայն՝ 1 տարի կառուցման ժամանակահատվածից 4 ամիսը նախատեսված էր նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման, իսկ 2 ամիսը՝ փորձաքննության համար,

գ) Ընկերությունը 2017 թվականի դեկտեմբերի 28-ին Հանձնաժողով է ներկայացրել «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները,

Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Լ որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0610 լիցենզիայով ամրագրված «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 12-ի «ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՄԱՍԻՍ ՏԱԲԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №319Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 12-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի հունվարի 12-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0610 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Գրանդ Սոլար 1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
 - 1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 22-ի №652-6434 գրությամբ ներկայացված №ՔԲԵՆ17/51-45 երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր քսանհինգ դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
 - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ինսունհինգ հազար երկու հարյուր հիսուն դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի փետրվարի 26-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 12-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝**

Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ